ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ն.Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքի առաջին հոդվածը հռչակում է. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»[1]: Բացառիկ և անփոխարինելի են պայմանագրի դերն ու նշանակությունը՝ որպես սոցիալական պետության կայացման, հասարակության կայուն ու համաչափ զարգացման հիմնական միջոց:

Պայմանագրի էական առանձնահատկությունն այն է, որ դրա շրջանակներում յուրաքանչյուր կողմի նպատակը կարող է իրականացվել միայն մյուս կողմի նպատակների իրագործման միջոցով: Կողմերը փոխադարձորեն շահագրգռված են, և ընդունելի է այն կարծիքը, որ պայմանագիրը կարող է ապահովել այնպիսի կարգ, կազմակերպվածություն ու կայունություն, որոնց չի կարելի հասնել ամենախիստ վարչաիրավական միջոցներով:

Պայմանագրերի միջոցով կողմերը կենսագործում են իրենց քաղաքացիական իրավունքները, բավարարում զանազան պահանջմունքներ: Դրանց օգնությամբ քաղաքացիներն ընդունվում են աշխատանքի, սահմանազատվում են նրանց աշխատանքային պարտականությունները, որոշվում աշխատանքային պայմանները: Շուկայական հարաբերություններում այն բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և որակը, մեծացնում պատասխանատվությունը: Միայն պայմանագրերի շնորհիվ են առավելագույնս կոնկրետացվում ձեռնարկատիրական հարաբերությունների մեջ մտնող կողմերի իրավունքներն ու պարտականությունները, կոնկրետ անելիքները, հաշվի են առնվում նրանց անձնական հատկանիշները, մանրամասնվում և հստակեցվում փոխադարձ պարտավորությունների ու դրանց կատարման հետ կապված առանձնահատկությունները:

Պայմանագրերը հնարավոր են դարձնում նյութական բարիքների բաշխման համաչափությունը:

Պայմանագրի դերը հատկապես մեծացել է ԽՍՀՄ փլուզումից հետո: Բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց գոյությունը նախկինում պայմանավորված էր մեկը մյուսով, հիմա մնացել են տարբեր, ինքնուրույն պետությունների տարածքներում: Տնտեսական շահը և ժողովրդի բարեկեցությունը պահանջում են տվյալ ձեռնարկությունների միջև կապերի վերականգնում, որը հնարավոր չէ առանց պայմանագրի: Որպեսզի տնտեսվարող սուբյեկտն ինքնուրույն դուրս գա արտաքին շուկա, նույնպես պետք է դիմի պայմանագրի օգնությանը:

Մեծ նշանակություն ունեն հատկապես միջպետական, միջկառավարական պայմանագրերը, որոնք ապահովում են նաև հասարակության անվտանգությունը, անհատներին հավատ ներշնչում ապագայի հանդեպ, խթանում ձեռնարկատիրական գործունեությունը: Պետությունը, կարևորելով միջազգային պայմանագրերը, իր օրենքներով նախատեսված այլ նորմերի առկայության

---

[1] *Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, Ե., 1995, էջ 8:*

ա/ որակական ածականով՝ *թե՛ նախադաս և թե՛ հետադաս շարադասությամբ:*

Կրկնվող նախադաս որոշիչն ունենում է ավելի հաճախ բացականչական, երբեմն էլ պատմողական երանգ. ինչպես՝ «... Ու կապո՛ւյտ, կապո՛ւյտ, կապո՛ւյտ *երկընքից թափում է կարծես երգ ու խնդություն» /ԵՁՊ, 435/: «Միակ բժշկական մեթոդը, որ գոյություն ուներ այդ* հին, հին *երկրում» /ՎԹ, 101/: Այստեղ կրկնված որոշիչներն ունեն նույն շարահյուսական կիրառությամբ որոշյալ (տեղի պարագա):*

Կրկնյալ և կրկնորդ նախադաս որոշիչները հաճախ լրացնում են կոչականին՝ շեշտելով նրա այս կամ այն հատկանիշը. ինչպես՝ «Նազում ես ու շորորում զմրուխտե քո շորերում... Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ձորերում, Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ *Նաիրյան դալար բարդի» /ՀՍ, 1, 67/:*

*Երբ անհրաժեշտ է լինում ավելի ընդգծել կրկնվող որոշչի բառական նշանակությունը, կրկնորդ որոշիչը ստանում է տվյալ իմաստը սաստկացնող նշանակությամբ լրացում. օրինակ՝ «*Փոքր, *շատ* փոքր *քաղաք էր» /ՎՍ, 211/: «Այդ բոպեին հանկարծ չգիտեմ ինձ ինչ պատահեց, միայն քիչ հետո զգացի, որ ամուր-ամուր սեղմում եմ նրա մեջքը ձեռքովս, դեմքս ծածկել եմ նրա կրծքի մեջ, և* դառն, անտանելի դառն *արտասուքները խեղդում են ինձ» /ՆԴ, 265/: Այստեղ* շատ փոքր *և* անտանելի դառն *ձևերը գերադրական աստիճանի յուրահատուկ դրսևորումներ են, ընդ որում՝ առաջինը ստորոգելիի /քաղաք/, իսկ երկրորդը ենթակայի /արտասուքները/ որոշիչ լրացումներ են:*

Նախադաս շարադասությամբ կրկնյալ և կրկնորդ որոշիչները երբեմն ունենում են տարբեր երանգ: Այսպես, օրինակ, կրկնյալը հանդես է գալիս բացականչական, իսկ կրկնորդը՝ պատմողական երանգով. ինչպես՝ «Է՛, անո՛ւշ, անուշ *աշուն էր...» /ՄԳ, 24/:*

Կրկնվող ածական որոշիչը հաճախ էլ հանդես է գալիս հետադաս շարադասությամբ՝ հատկանշի կրկնության հետ նաև դրսևորելով խոսողի /գրողի/ ակտիվ գնահատողական կամ զգացական վերաբերմունքը: Այս դեպքում նա մեծ մասամբ լրացնում է ենթակային, ունենում է բացականչական կամ պատմողական երանգ և լրացյալից տրոհվում է. օրինակ՝ «Շքեղ մի դղյակ կար՝ բա՛ր, բա՛ր, *արծվի թևերի վրա...» /ԱԻ, 3, 46/: «Հեռաստանները հացի-*ոսկեգույն, ոսկեգույն, *Դու նայեցիր, ժպտացիր իմ գունատ հոգուն» /ԵՁՊ, 257/: «Իջնում է նորից լռությունը՝* ծանր, ծանր*» /ՎԹ, 125/:*

Երբ հետադաս կրկնյալ որոշիչը սկսվում է ձայնավորով, որոշյալը բնականաբար ստանում է որոշիչ հոդ, և տվյալ որոշյալն ու որոշիչը արտասանվում են առանց միջբառային արտասանական դադարի, որի հետևանքով կրկնվող որոշիչը չի տրոհվում իր որոշյալից. օրինակ՝ «Ա՛խ, ի՞նչ հեշտ են սարի վրա Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ*» /ՀԹ, 36/:*

բ/ Թվականով*: Թվական որոշչի կրկնությունը քիչ է հանդիպում: Ընդ որում հիմնականում կրկնվում է դասական թվականով արտահայտված որոշիչը՝ նախադաս և հետադաս շարադասությամբ. օրինակ՝ «Ջեմ մոռանում քեզ,* առաջին, առաջին *իմ սեր»: «Օ՛, երգե՛ր իմ -* Առաջի՛ն, Առաջի՛ն*...» /ԵՁՊ, 128/: Նշենք որ, հաճախ թվական որոշիչ ունեցող միևնույն ենթական լրացուցիչ սաստկական իմաստային երանգով կրկնվում է այլ բառական արտահայտությամբ, և կրկնվում է նաև նրա որոշիչը. ինչպես՝ «Դու մի՛ ասիլ* օխտը հսկա եղբայրներ

կան, օխտը ավազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամբոցն էլ մոտիկ սարի գլխին է» /ՀԹ, 385/: Այստեղ եղբայրներ և ավազակապետ ենթակաները նույն գործող անձինք են ցույց տալիս, ուստի կրկնված օխտը թվական որոշիչը նախադասության խորքային կառուցվածքում ունի միևնույն որոշյալը:

գ/ Դերանուններով: Կրկնյալ և կրկնորդ դերանուն որոշիչները հիմնականում լինում են նախադաս և կրում են տրամաբանական շեշտը: Նման կրկնությամբ հանդես են գալիս ցուցական, հարցահարաբերական և անորոշ դերանունները. օրինակ՝ «... Եվ ինչքա՛ն, ինչքա՛ն թշվառներ մեռել են անողոք ծեծի տակ» /ԱԻ, 3, 89/: «Այն ի՞նչ տենչեր են վեհ, ու անխորտակ ու խոր, Որ սերմանել եք դուք երկրներում օտար, Եվ ո՞ր, և ո՞ր, և ո՞ր նպատակի շողով Ձգտել եք կյանքը մեր անմխիթար Հանել ափունքներից...» /ԵՁ, 470/:

Դերանուն որոշիչը հանդես է բերում կրկնվելու նաև մեկ այլ յուրահատկություն. երբեմն կրկնյալ որոշիչը գործածվում է որոշյալից առաջ, իսկ կրկնորդը՝ նրանից հետո, ընդ որում՝ մեկ այլ երանգով վերաբերմունքային տարրն ավելի ընդգծելի դարձնելով. օրինակ՝ «Էրգրի ձմեռը ուրիշ ձմեռ էր, ուրի՛շ ...» /ՄԳ, 20/:

դ/ Անկախ դերբայներով: Դերբայով արտահայտված որոշիչը կրկնվում է հիմնականում նախադաս գործածությամբ. ինչպես՝ «Ամոքիր դու իմ ցաված Սիրտը սիրով քո անբիծ,- Այն մոռացվա՛ծ, մոռացվա՛ծ Հեքիաթները պատմիր ինձ» /ՎՏ, 135/:

Երբեմն գոյական որոշյալն ունենում է նախադաս մեկ այլ որոշիչ և հետադաս կրկնվող /մասնակի կրկնությամբ/ դերբայական որոշիչ լրացում. օրինակ՝ «Աղավնին չափազանց դարպասող թռչուն է՝ դյութող ու դյութվող» /ՎԹ, 149/:

ե/ Կապի ու կապի խնդրի կապակցությամբ. ինչպես՝ «Այդ ծառը սլացիկ էր՝ բարդու նման, բարդու նման»: Այստեղ կրկնված որոշիչը կարող է հանդես գալ նաև բարդու, բարդու նման ձևով:

զ/ Բառակապակցությամբ. ինչպես՝ «... Ողջ անառակ որդոց պարտքը պիտի տամ Բոլոր մոլոր, բոլոր մոլոր մայրերին» /ՀՇ, 3/:

Բ. Միևնույն բառական արտահայտությամբ որոշչի գործածվելը տարբեր լրացյալների հետ: Արդի հայերենում շատ հաճախ նախադասության տարբեր անդամներ ստանում են նույն բառական արտահայտությամբ որոշիչ լրացում: Սա որոշչի յուրահատուկ կրկնություն է՝ տարբեր առարկաների նույն հատկանիշն արտահայտելու նպատակով: Ինչ վերաբերում է այդ որոշիչների լրացյալներին, ապա դրանք կարող են ունենալ շարահյուսական նույն կամ տարբեր կիրառություններ: Եվ դրան համապատասխան էլ որոշչի նման կրկնությամբ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա/ համասեռ որոշյալներով նախադասություններ և բ/ անհամասեռ որոշյալներով նախադասություններ: Առաջին դեպքում կրկնյալ և կրկնորդ որոշիչներն ունենում են շարահյուսական նույն, իսկ երկրորդ դեպքում տարբեր կիրառությամբ լրացյալներ: Այսպես՝ «Այդ ձին ծնվել էր այդ գավակով, այդ բեռնով, այդ գլխով ու այդ գույնով» /ՀՄ, 204/: «Արևը բարձրացավ, և որքան բարձրանում էր նա, այնքան նրա պայծառ լուսավորության ներքո երևան էին գալիս աճարկու բանակի աճարկու տեսարանները» /Ր, 454-455/: Առաջին նախադասության մեջ այդ դերանվամբ արտահայտված որոշիչը կրկնվել է բազմակի սահմանափակման խնդիրների

/գավակով, բեռնով, գլխով, գույնով/ հետ գործածվելով, իսկ երկրորդ նախադասության մեջ աճարկու ածականով արտահայտված որոշիչներից մեկը լրացնում է բանակի հատկացուցչին, մյուսը՝ տեսարանները ենթակային: Հետևաբար նույն բառական արտահայտությամբ որոշիչներն առաջին նախադասության մեջ ունեն համասեռ, իսկ երկրորդ նախադասության մեջ՝ անհամասեռ որոշյալներ:

Երբեմն էլ միևնույն նախադասության մեջ երկուսից ավել անգամ կրկնվելու դեպքում որոշիչը կարող է ունենալ միաժամանակ և՛ համասեռ, և՛ անհամասեռ որոշյալներ. օրինակ՝ «Հիմա ելնում են ահա իմ դեմ այն տարիները, արդեն անցած, եվ այն դեմքերը, որ հրեղեն տարիներում այն հերոսացան» /ԵՉՊ, 157/: Այստեղ առաջին և երկրորդ այն որոշիչները լրացնում են բազմակի ենթականերին /տարիները, դեմքերը/, իսկ երրորդ այն որոշիչը՝ ժամանակի պարագային /տարիներում/:

Տարաբնույթ պատկեր է ներկայացնում տարբեր որոշյալներ ունեցող միևնույն բառական արտահայտությամբ որոշիչների արտահայտության պլանը: Միևնույն նախադասության մեջ կրկնվող նման որոշիչն արտահայտվում է.

1) Ավելի հաճախ՝ ածականով: Քանի որ ածականի հիմնական գործածությունը որոշչային կիրառությունն է, ուստի միևնույն նախադասության մեջ տարբեր անդամների լրացնելու դերով ավելի շատ հանդես է գալիս ածականով արտահայտված որոշիչը: Ընդ որում՝ կրկնվող ածական որոշիչները լրացնում են տվյալ նախադասության մեջ թե՛ նույն և թե՛ տարբեր կիրառությամբ անդամների: Այլ կերպ ասած՝ կրկնվող ածական որոշիչներն ունենում են համասեռ և անհամասեռ լրացյալներ: Համասեռ լրացյալներով ածական որոշիչները մանավորապես լրացնում են.

ա/ Բազմակի ենթականերին. ինչպես՝ «Մի անզգույշ խոսք, մի անզգույշ շարժում կարող էր մատնել նրան...» /Ր, 39/:

Բազմակի ենթակաները սովորաբար ցույց են տալիս միևնույն գործողությունը կատարող մեկից ավելի առարկաները: Երբեմն էլ դրանք միևնույն անձը կամ իրն են ցույց տալիս, և այդ ենթակաների տարբեր գործող սուբյեկտներ մատնանշելը ձևական է. դրանք միևնույն անձի կամ իրի տարբեր բնութագրություն-անվանումներն են: Եվ այս պարագայում միևնույն ածական որոշիչը լրացնում է այդ նույն առերևույթ բազմակի ենթականերին: Օրինակ՝ «Ընկավ մեծ գեղարվեստագետը, մեծ քարոզիչը ու մեծ դժգոհը» /ՀԹ, 416/: Թումանյանն այսպես է բնութագրում Լև Տոլստոյին՝ մահվան կապակցությամբ: Ուրեմն ընդգծված բազմակի ենթակաները միևնույն գործող անձն են ցույց տալիս: Այդ է պատճառը, որ ստորոգյալն արտահայտված է եզակի թվով՝ իմաստով համաձայնելով միևնույն անձը ատնացույց անող բազմակի ենթականերին /քերականորեն առկա է անհամաձայնություն/: Բերենք նմանատիպ մեկ այլ օրինակ՝ «Ներքին կռիվը, ներքին պատերազմը ընդհանրականից դարձավ մասնավոր-ընտանեկան» /Ր, 523/:

բ/ Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների ենթականերին. ինչպես՝ «Սակայն վերջ ի վերջո հաղթվեց Պարսկաստանը, և վճռվեց պարսկահայկական հարցը. այսինքն՝ պարսկահայկական նահանգներն անցան Ռուսաստանին, և ապահովվեց հայ ժողովրդի գոյության խնդիրը» /ՀԹ, 438/:

գ/ Ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասության

ստորոգելիներին. «*Աշխարհն ինձ համար փոքրիկ պուրակ էր, Փոքրիկ մի բակ էր, փոքրիկ մի դեզ*» /ՀՍՔ, 19/: «*Մի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի*» /ՎՏ, 289/:

դ/ Անվանական անդեմ միակազմ բարդ համադասական նախադասության գերադաս անդամներին. *ինչպես՝* «*Հայելում փակցված քարտի վրա գրված էր անունը՝ Թեոդոր Բաղալ: Հաճելի անուն, հաճելի երիտասարդ*» /ՎՍ, 22/:

ե/ Ձևական դիմավոր միակազմ բարդ համադասական նախադասության գերադաս անդամների անվանական բաղադրիչներին կամ ստորոգելիներին. *ինչպես՝* «*Ջորս կողմը սարեր են ծալ-ծալ, Եվ ծալ-ծալ ձորեր են այստեղ ...*» /ՀՍՔ, 42/: «Սև *գերան է*, սև *պատ*, Սև *լուսամուտ*, սև *շուք*, *Տվայտում է դրսում Գիշերվա խուլ մի բուք*» /ՎԴ, 19/:

զ/ Բայական անդամի խնդիր լրացումներին, *մասնավորապես ուղիղ խնդիրներին՝ թե՛ պարզ /այս դեպքում խնդիրները լինում են բազմակի/ և թե՛ բարդ համադասական նախադասության մեջ. օրինակ՝* «*Հիմա Վաղոն նոր օչախ, նոր ծուխ ունի*» /ՄԳ, 130/: «*Զարմանալի հատկություններ ունի Արաքսը... զարմանալի բնավորություն ունեն և նրա խորհրդավոր շրջակայքը*» /Ր, 505/: *Իսկ հետևյալ օրինակում ածական որոշիչն իր կրկնյալ և կրկնորդ ձևերով լրացնում է համադասական նախադասության բաղադրիչների միջոցի խնդիրներին.* «*Գարշ իրավունքով բռնաբարում են և գարշ օրենքով լկում ու մորթում*» /ԱԻ, 2, 68/:

Մի առանձին խումբ են կազմում այն նախադասությունները, որոնցում կրկնվող ածական որոշիչների որոշյալներն անհամասեռ են իրենց շարահյուսական կիրառությամբ: Միևնույն բառով արտահայտված որոշիչները լրացնում են մասնավորապես հետևյալ անհամասեռ անդամներին.

ա/ Ենթակային և ուղիղ խնդրին. *ինչպես՝* «*Մի* սև *աղջիկ արևին իր* սև *մազերը ցրել է, Լաց է լինում ծիծաղով՝ Վարդ կոչիկն է կորցրել*» /ՎԴ, 180/: «*Հայոց զորքը ետ էր բերել հայոց հողն ու հայոց հացը*» /ՌԴ, 354/: *Այստեղ կրկնորդ որոշիչը կարող է լինել նաև տվյալ որակական ածականի կրկնավոր ձևը.* «*Բայց դու երկնքի կարիք չունեիր, Քեզ լոկ մի* կապույտ *թաշկինակ էր պետք Իմ* կապույտ-կապույտ *արտասուքները սրբելու համար*» /ՀՍՍ, 72/:

բ/ Ենթակային և հանգման խնդրին. *ինչպես՝* «*Նա զգում էր, որ այսուհետև* փոխադարձ *սառնությունը պիտի փոխվի* փոխադարձ *ատելության*» /ԱՇ, 159/:

գ/ Ենթակային և տեղի պարագային. *ինչպես՝* «*Ճանապարհը՝* կապույտ *ոլորվում էր առաջ... Ու կորչում էր հեռու երկնքի մեջ* կապույտ» /ԵՁՊ, 266/:

դ/ Ենթակային, միջոցի խնդրին և տեղի պարագային. «*Քանի՞ ժողովուրդ Վանա լիճ ունի,-* օտար *գրքերում և* օտար *լեզվով* օտար *մարդիկ են այս հարցը տալիս...*» /ՊՍ, 206/:

ե/ Ենթականերին, ուղիղ և ներգործող խնդիրներին. *ինչպես՝* «*Է՛, ե՞րբ էր, էլի՛ գարուն, այսպիսի* կապույտ *ու փափուկ մի առավոտ կար,*կապույտ *աշխարհ, Մարութա սարը* կապույտ *քողն իր դեմքին, ձորերն ու կիրճերը* կապույտ *երկնքով լցված, ծերպերին ու ձորաբերաններին թառած գյուղերի չունչը* կապույտ *էր, սանձը կտրած Տալվորիկի հևքից ձորը լցված* կապույտը *քլթքլթում էր...* » /ՄԳ, 167/:

զ/ Ստորոգելիին և շահի խնդրին. «Սիրուն *անուն է* սիրուն *ձիու*

համար...»:/ՎՍ, 221/:

է/ Ստորոգելիին և տեղի պարագային. *օրինակ՝ «Հևիհև էր նա, Լեզուն հանած էր,* Խոնավ *աչքերում* Խոնավ *մի հարց էր...»/ՎԴ, 29/:*

ը/ Հիմունքի պարագային և սահմանափակման խնդրին. *ինչպես՝ «Մի անգամ նա* պաշտոնական *թույլտվությամբ և* պաշտոնական *գործով մտավ կանանց գոտին՝ ստուգելու համար պետական աղյալների որպիսությունը» /ԴՄ, 31/ և այլն:*

2) Թվականով*: Ընդ որում կրկնվող թվական որոշիչն ավելի հաճախ ունենում է համասեռ որոշյալներ՝ հանձին պարզ նախադասության մեջ բազմակի ենթակաների և բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների ենթակաների.* «Երեք *ճաճանչ,* երեք *երանգ,* երեք *գույն... Բույր կապել են քո աչքերում, իմ հոգում-Ծիածան» /ԵՁՊ, 254/:* «Քառասունհինգ-հիսուն *աչք ոլորվեց խուլթեցի հարսի վրա,* քառասունհինգ-հիսուն *ձեռք մեկնվեց ծվծված փեշը» /ՄԳ, 51/:*

Կրկնվող թվական որոշչի կրկնյալ և կրկնորդ ձևերը լինում են նաև անհամասեռ: Այսպես՝ դիտարկենք հետևյալ նախադասությունը. «Էն լու՞ չասիր՝ գընամ Սասուն, կանայք բերեմ քառսուն-քառսուն, Քառսուն *բեռնով ոսկի հանեմ, Հայոց երկիր ավեր անեմ» /ՀԹ, 231/: Այստեղ ընդգծված թվական որոշիչների անհամասեռությունը բազմատարր է. նախ՝ դրանց միջև առկա է ներխոսքիմասային տարաբժեքությունը. առաջին որոշիչը բաշխական թվական է և, որպես թվականի մեկ այլ ձևից սերած կաղապար, կրկնորդ որոշիչն է, իսկ երկրորդը քանակական թվական է և, որպես առաջինի կազմության համար ելակետային ձև, կրկնյալ որոշիչն է: Երկրորդ՝* քառսուն-քառսուն*-ը ինքնուրույն որոշիչ է /կանայք ուղիղ խնդրի/, իսկ* քառսուն*-ը ընդամենը բաղադրյալ որոշչի /քառսուն բեռնով/ մի բաղադրիչն է:*

3) Դերանուններով*: Կրկնված դերանուն որոշիչները լրացնում են՝*

ա/ բազմակի ենթականերին և ժամանակի պարագային*: Այսպիսին է վերը գրված օրինակներից մեկը. «Հիմա ելնում են ահա իմ դեմ* Այն *տարիները, արդեն անցած, Եվ* այն *դեմքերը, որ հրեղեն Տարիներում* այն *հերոսացան...» /ԵՁՊ, 157/:*

բ/ Որոշիչ և բացահայտիչ լրացումներին. *«Հարկ չկա երկար պատմելու* Այդ *բանվոր խոխի՝* այդ *Իվանի մասին...» /ԵՁՊ, 193/:*

գ/ Ուղիղ խնդիրներին և տեղի պարագաներին. *օրինակ՝ «Եվ մի՞թե, մի՞թե, մի՞թե չերգե՞ց Եվ չողջունե՞ց իմ սիրտը խնդուն* Այն *առավոտը -* այն *խոր մթնում, Խոր խավարո՛ւմ* այն*- արևն* այն *կեզ» /ԵՁՊ, 158/:*

դ/ Տեղի պարագաներին և միջոցի խնդրին. *օրինակ՝ «Կուզեի նստել* նույն *թանձրաթիկունք Ցանկապատի մոտ,* Նույն *թանձրաթաղանթ ընկուզենու տակ Եվ* նույն *աչքածակ աչքերով տեսնել Արցունքոտ ծիծաղն առավոտների, Մայրամուտների թախիծն արևոտ» /ՀՍՍ, 218/ և այլն:*

Ավելացնենք, որ երբեմն որոշիչ+որոշյալ կապակցության կրկնությունը կազմում է տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասություն՝ ամեն անգամ ցույց տալով տարբեր առարկա իր տվյալ հատկանիշով: Սա որոշչի ու իր լրացյալ ենթակայի քերականական համանունության արտահայտություններից մեկն է. օրինակ՝ «Ջմռան այդ օրը աշխարհում միլիոն ու մեկ *մարդ հյուրընկալ է,* միլիոն ու մեկ *ճաշի հրավեր ունի /*միլիոն ու մեկերորդը*՝ ինքը Կոմիտասը/,* միլիոն ու մեկ *մարդ համերգի ու թատրոնի տոմս է գնել,* միլիոն ու մեկ

մարդ աշխատում է, միլիոն ու մեկ մարդ մտածում, գլուխ է ջարդում, միլիոն ու մեկ մարդ մեռնում է, միլիոն ու մեկ մարդ ծնվում է...» /ՄԴ, 434/:

Չափածո խոսքում կրկնվող որոշիչը հաճախ դառնում է ասույթի իմաստի և հուզարտահայտչական լարվածության կրողը, նպաստում է խոսքի կշռույթային ու չափական ներդաշնակության ապահովմանը: Այս պարագայում որոշչի կրկնությունը դառնում է արտահայտչամիջոց, կրկնաբերական արվեստի արտահայտություն՝ կազմերով հարակրկնություն, վերջույթ, հանգույց և այլ բանադարձումներ: Որոշիչը հարակրկնություն է կազմում բանատողերի սկզբում կրկնվելով.

Ուրիշ ամպեր են նայել սարերին,
Ուրիշ մամուռ է ծաղկել քարերին,
Ուրիշ աչքեր են նայում արևին /ՀՍ, 114/:

Նույն ձևով որոշիչը տողավերջյա ներդաշնակ կրկնությամբ կազմում է վերջույթ.

Ես չրգտա ոչ մեկին
Երազներից իմ շքեղ,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին,
Հերոսներից իմ շքեղ /ՀԹ, 56/:

Այստեղ քանի որ շքեղ որոշչի հետ կրկնվել է նաև իմ հատկացուցիչը, ուստի վերջույթ է հատկացուցիչ + որոշիչ կապակցությունը /իմ շքեղ/:

Հանգույցը չափածո խոսքի կառուցման հնարանք է, այն բանադարձումը, երբ միևնույն կառույցում համատեղում են հարակրկնությունը և վերջույթը, որոնց գործառույթով հանդես են գալիս նախադասության տարբեր անդամներ: Ավելի հաճախ հանգույց է կազմվում որոշչի հարակրկնությամբ և ստորոգյալի վերջույթային կրկնությամբ.

Հազար ու մի գիրք կարդացի - խելացի գիրք չտեսա,
Հազար կնկա գիրկն ընկա - սիրեկան գիրկ չտեսա» /ԵՋ, 235/:

Նմանապես որոշիչը հանգույց է կազմում տեղի պարագայի կամ տեղի պարագայի ու ստորոգյալի հետ.

Երկու դարի արանքում,
Երկու քարի արանքում
Հոգնել եմ նոր ընկերի
Ու հին դարի արանքում /ՀԹ, 64/:

Կամ

Էն խոստումը ու՞ր մնաց,
Էն չչունը ու՞ր մնաց,
Սիրո քարափ, իմ քարափ,
Էն նախչունը ու՞ր մնաց» /ԳԱ, 13/:

Այսպիսով, որոշչի կրկնությունն արդի հայերենում հաճախադեպ է, արտահայտվում է տարբեր իրացումներով և ունի ոճական նշանակություն:

Համառոտագրություններ

ԱԻ - Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1974, հ. 3, Ե., 1975:
ԱՇ - Ալ. Շիրվանզադե, Քառս, Ե., 1976:
ԳԱ - Գուսան Աշոտ, Ծովասաղիկս, Ե., 1982:
ԳՄ - Գ. Մահարի, Ծաղկած փշալարեր, Ե., 1988:
ԵՉ - Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1962:
ԵՉՊ - Ե. Չարենց, Պոեմներ, Բանաստեղծություններ, Ե., 1984:
ՀԹ - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, Ե., 1978:
ՀՄ - Հր. Մաթևոսյան, Օգոստոս, Ե., 1984:
ՀՇ - Հովհ. Շիրազ, Քնար Հայաստանի, հ. 3, Ե., 1974:
ՀՍ - Հ. Սահյան, Երկերի ժողովածու. հ. 1, Ե., 1984, հ. 2, Ե., 1985:
ՀՍՍ - Հ. Սահյան, Սեղամ բացվիր, Ե., 1976:
ՀՍՔ - Հ. Սահյան, Քարափների երգը, Ե., 1988:
ՄԳ - Մ. Գալչոյան, Ձորի Միրոն, Ե., 1983:
ՆԴ - Նար-Դոս, Երկեր, Ե., 1977:
ՊՍ - Պ. Սևակ , Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1972:
ՌԴ - Ռազմիկ Դավոյան, Պլնձե վարդը, Ե., 1983:
ՎԴ - Վ. Դավթյան, Անկեղ մորենի, Ե., 1972:
ՎԹ - Վ. Թոթովենց, Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա, Ե., 1986:
ՎՍ - Վ. Սարոյան, Ընտիր երկեր, հ. 1, Ե., 1986:
ՎՏ - Վ. Տերյան, Բանաստեղծություններ, Ե., 1985:
Ր - Ռաֆֆի, Սամվել, Երկերի ժողովածու, հ. 7, Ե., 1956:

ПОВТОРЕНИЕ ОПРЕДЕЛЕНИЯ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А.С.КАРАПЕТЯН

Резюме

Определения часто повторяются, дополняя одни и те же или другие члены предложения. В обоих случаях повтор определения выявляет совершенно разные особенности, которые обуславливаются его выражением, условием и требованием контекста. Повтор определения имеет также стилистическое значение, в особенности, когда он используется в поэтической речи в качестве выразительного средства, составляя анафору, концовку, симплоку и т. д.